

Թեմա 6: ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ֆինանսական միջոցների ներգրավման հաջորդ տարբերակը վարկն է:

Վարկը պայմանավորվածություն է մեր և բանկի, վարկային կազմակերպության կամ գրավատան միջև այն մասին, որ մենք պարտքով ստանում ենք գումար՝ խոստանալով այն վերադարձնել պայմանավորված ժամկետում, դրա համար սահմանված տոկոսագումարների հետ միասին:

Այժմ հակիրճ քննարկենք վարկի առավելություններն ու թերությունները:

- Նախ, իսկապես առավելություն է այն, որ վարկը հաստատվում է բիզնեսի կարիքների վերլուծության հիմքով, ինչը օգնում է խուսափել ոչ խելամիտ ներդրումներից, քանի որ բանկն ինքը ներգրավված է վերլուծությունների մեջ:
- Երկրորդ առավելությունն այն է, որ վարկի ստացման հստակ ժամկետների, մարման գրաֆիկի կազմումը օգնում է բիզնեսին հստակեցնել կանխիկի շարժը և հասկանալ, թե կոնկրետ երբ և որքան հաստատուն ելքեր են մեզ սպասվում առաջիկայում:
- Եվ, վերջապես, մեր իրավունքները լիովին պաշտպանված են, քանի որ ամբողջ գործընթացը հիմնված է պայմանագրային հարաբերությունների վրա:

Թույլ կողմերից նշենք.

- Ամսական պարտադիր վճարների կատարումը, այդ թվում՝ միջնորդավճարներն ու տոկոսավճարները, որոնք կարող են բարձր լինել բիզնեսի շահույթի մարժայից:
- Ուշացման յուրաքանչյուր օրվա համար մեզնից գանձելու են տույժեր և տուգանքներ, ինչը նաև բացասաբար է ազդում մեր վարկային պատմության վրա:
- Ինչպես և արդեն նշեցինք լիզինգի դեպքում, այստեղ նույնպես ունենք անվճարունակության և, արդյունքում, գրավի կորստի ռիսկ:

Եվ, վերջապես, անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար կարող ենք դիմել նաև **վարկային/ կրեդիտային քարտի օգնությանը՝ վարկային գծի կամ օվերդրաֆթի տեսքով:**

Այն նախատեսված է բանկի կողմից վարկի ձևով տրամադրված դրամական միջոցները օգտագործելու՝ կանխիկացնելու, առևտուր կատարելու կամ ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու նպատակով:

Առավելություններից նշենք՝

- Գումարի արագ ստացումը՝ առանց հավելյալ դիմումի:
- Եվ, իհարկե, ինչպես և վարկի դեպքում, այստեղ նույնպես մեր իրավունքները պաշտպանված են, քանի որ ձեր հարաբերությունները բանկերի հետ կարգավորվում է պայմանագրով: Բացի այդ, բանկերը վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից ու ենթարկվում կարգավորման ու վերահսկման:

Թույլ կողմերից նշենք՝

- Գուցե չստացվի վարկը վերցնել ամբողջ գումարի չափով, որքան որ կարիք ունեք՝ կախված հասանելի գումարի սահմանաչափից:
- Ամսական պարտադիր վճարումը, այդ թվում՝ միջնորդավճարների և տոկոսավճարներ տեսքով:
- Եվ, իհարկե, այստեղ նույնպես բախվում ենք անվճարունակության ռիսկի հետ. ֆինանսական խնդիրներով պայմանավորված, եթե չկարողանաք պաշաճ կատարել մարումները, ապա ունեք գույքը կորցնելու, վատ վարկային պատմություն ձևավորելու ռիսկ:

Այսպիսով, պարտքի հիմնական տարրերը ներառում են

- փոխառված մայր գումարը,
- փոխառված գումարի վրա գանձվող տոկոսը (եթե կիրառելի է)
- և մարման ժամանակացույցը սահմանող ժամկետներն ու պայմանները:

Այժմ, ինչպես և խոսք էինք տվել, առավել հանգամանալից անդրադառնանք ամենահաճախ հանդիպող պարտքի տեսակին՝ **վարկավորմանը**: Ընդհանուր առմամբ, վարկերը տարանջատվում են՝ ըստ դրանց օգտագործման նպատակի:

Թվարկենք մի քանիսը.

- **Սպառողական վարկ.** նպատակն է օգնել ֆիզիկական անձանց՝ ապրանքներ ձեռք բերելու կամ այլ ընթացիկ ծախսեր հոգալու համար:
- **Ավտովարկ.** ավտոմեքենա գնելու նպատակով տրամադրվող սպառողական վարկերն են:
- **Ուսումնական վարկ.** տրամադրվում են ֆիզիկական անձանց՝ կրթության ծախսերը հոգալու նպատակով:

- **Ապառիկ վարկ.** հնարավորություն է տալիս սպառողներին ձեռք բերել հիմնականում տեխնիկա կամ այլ սարքավորումներ:
- **Հիփոթեքային վարկ.** տրամադրվում է բնակարան ձեռք բերելու, վերանորոգելու կամ հողամասը կառուցապատելու համար՝ գրավադրելով այդ տունը կամ բնակարանը կամ, հողամասի կառուցապատման դեպքում, հողամասի կառուցապատման իրավունքը:
- **Վարկային գիծ.** ընթացիկ ծախսերի իրականացման համար, որպես կանոն, վարկային քարտերի միջոցով տրամադրվող վարկն է:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման նպատակով տրամադրվող վարկատեսակներից կարելի է նշել՝

- **Գյուղատնտեսական վարկ.** տրամադրվում է գյուղատնտեսական արտադրության կամ գյուղատնտեսական հումքի վերամշակման կազմակերպման նպատակով: Գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են ինչպես իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին, այնպես էլ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնային տնտեսություններին: Մարման գրաֆիկը սովորաբար կազմվում է հաշվի առնելով սեզոնայնությունը, վարկառուների դրամական հոսքերի առանձնահատկությունները: Հայաստանում շատ հաճախ բանկերի և պետության համագործակցության միջոցով առաջարկվում են սուբսիդավորվող գյուղատնտեսական վարկեր: Սուբսիդիան պետության կողմից տրամադրվող աջակցությունն է, որի արդյունքում բանկային տոկոսը վարկառուի համար առավել մատչելի է դառնում կամ զրոյացվում է:

Գյուղատնտեսական սուբսիդավորված վարկերի առանձնահատկություններն են.

- Վարկի ցածր տոկոսադրույքը, որը հատկապես ցածր է կամ զրոյական սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողների, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվների համար:
- Ինչպես վարկի տոկոսադրույքի, այնպես էլ մայր գումարի համար ֆինանսական կառույցի կողմից մարման արտոնյալ ժամկետի սահմանումը: